



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 32Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ԹԻՎ 16Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը, ՀՀ Նախագահի 22.07.2017թ. թիվ ՆՀ-515-Ա հրամանագիրը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի օգոստոսի 26-ի «ՀՀ առաջին աստիճանի դատարանների նստավայրերը և դատավորների մասնագիտացումների ցանկը հաստատելու մասին» թիվ 16Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

ա/ Հավելվածի 13-րդ աղյուսակի 3-րդ կետի «Մասնագիտացում» սյունակը «Քրեական» բառից հետո լրացնել «/անչափահասների գործերով/» բառերով,

բ/ Հավելվածի 13-րդ աղյուսակի 10-րդ կետի «Դատավոր» սյունակից հանել «Մովսեսյան Հարություն Սերյոժայի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 03-ից:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահի
պաշտոնակատար

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. հուլիսի 31
ք. Երևան